

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ


Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . 7 "

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տոյար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՓՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Յ Ի

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Դրոշիւնք եւս

չեմ տրոշիր

Երանցուման տողը
20 անդիւն

ՎԵՐՋԻՆ ԶԵԿՈՅՑ

Մեր այն կարգ մը բաժանորդները՝ որոնք քերթիս տնօրէնին ձամբորդութեան միջոցին եւ նախկինով խոստացած էին միւլիւն տարեգումն իրենց պարտքը ԱՆՊԱՏՃԱՌԻ ՂՐԿԵԼ, բող հաձին գունէ այս Գոռնուար ամիսը յրանալէ առաջ խոստումնին կատարել: Հակառակ արարացային զանոնք մեզ խաբողներ պիտի նկատենք եւ ինչ դիրքի տէր ալ եղած ըլլան, փետրուարի մեր առաջին քիւերուն մէջ զիրենք յաւանէ անուանէ պիտի նշանակենք: Այսպիսիները միանգամ ընդ միշտ համոզուելու են քէ՛ քերթիս ամենօրեայ ծախքը միմիայն բաժնեգիններովը կը գոցուի. իսկ քերթը ստանալ ու չվճարելը ողորակի անոր գոյութեան դէմ դառնել է. մենք չը պիտի ներենք այդ կերպ վարողներուն:

ՍԱԿԵԴՈՆԻՈՅ ԿԵՏ
ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱԼ

Յրանալան կառավարութիւնը հրատարակեց Դեղին տետրակ մը Մակեդոնիոյ գործերուն մասին. առով երեւան կենիւ թէ տարիէ մը աւելի է որ պետութեանց գետնայինքը և հիւպատոսները յստակ կերպով ցոյց տուած են թէ Մա. կեդոնիոյ մէջ ապստամբութիւնը անխուսափելի է, ու կրնայ ընդհանուր պատերազմի դուռ բանալ:

Դետապաններու հազորդած տեղեկութեանց վրայ պետութիւններէն ոմանք, մասնաւորապէս Յրան. սա՝ Ռուսիոյ հետ համախորհուրդ, ջանացած են միշտ համաձայնութիւն մը գոյացնել ազգու միջա. մտութիւն մը ընելու, որպէս զի ապստամբութիւն չը ծագի:

Թաւ կը կարծէ գիտնալ թէ այս պահուս պետութեանց միջեւ հա. մաձայնութեան մը կաշխատուի: Բայց, կը տարակուսի որ, այս համաձայնութիւնը ժամանակին

հասնի: «Քանի մը շաբաթէն վըճուական օրերէն կը բաժնուինք, կըսէ, այսինքն ապստամբութիւնը արդէն ծագած կըլլայ. պէտք է որ այս վայրկեանէս ձեռքերնիս ազատ ըլլայ գործելու: Պարագանքը խիստ ծանր են և պէտք է հսկիլ»:

Միեւնոյն ատեն կիմացուի Սո. ֆիայէ թէ Բէրինի կողմերը ապստամբական շարժումը ծայր տուեր է: Զիններուն հալիլ սկսելուն հետ, Սարաֆովի կուսակցութիւնը կը փութայ զէնք եւ պաշար հասցնել Մակեդոնիա. իսկ Միխայիլովսքիի կուսակցութիւնը կը ջանայ Պուլկար Ազգ. Պաշտպանին 150,000 ֆր. հայրենասիրական փոխառութիւն մը կնքել:

Ինչպէս մեր նախորդ թիւի թուրքերէն բաժնին մէջ մեր ընթերցողաց հազորդիցինք, Պուսոյ դետապաններուն Դրան ըրած նոր գիմումը, տակաւին մեծ պետութիւններու համաձայնութիւնը որոշ կէտի մը հասած չէ. թէեւ ամէնէն ալ կընդունին Եւրոպական թուրքիոյ նահանգներուն վիճակը բարեփոխելու պէտքը, սակայն տեսակետնին կը տարբերի. Ռուսիա, Յրանսա և Աւստրիա գրեթէ համաձայն են Մակեդոնիոյ բարենորոգման մասին, Սուլթանին հասկեցածէն քիչ մը տարբեր ձեւով. Գերմանիա գրեթէ ձեռն. պահ մնալ կուզէ, ինչպէս ըրաւ Կրէտէի խնդրոյն ատենը. իսկ Անգլիա Մակեդոնիոյ բարենորոգմանց պէտքը շեշտելով միատեղ, նոյնը փորը-Ասիոյ կամ աւելի եւս Հայաստանի նահանգներուն համար ալ անհրաժեշտ կը նկատէ. իտալիա որ դեռ որոշ բան մը չէ ըսած, կերեւայ թէ Անգլիոյ շաւ. զին պիտի հետեւի:

Գիտենք արդէն թէ Կրէտէի խնդիրը, առանց Գերմանիոյ և Աւստրիոյ, միւս չորս պետութեանց համաձայնութեամբ լուծուեցաւ, և Գանտիոյ մէջ տեղի ունեցած սովորական դէպք մը այդ բարեբաւարիկ լուծումին պատճառ եղաւ:

Այժմ որ վեց մեծ պետութեանց գրեթէ հինգը լրջօրէն ձեռք աւ

ռած են Եւրոպական թուրքիոյ բարենորոգմանց խնդիրը, յարմարագոյն առիթը ըլլալ կը կարծենք անոնց ուշադրութիւնը Հայաստանի վրայ ալ հրաւիրելու: Սասնոյ կոտորածէն ի վեր մինչեւ այսօր, երբ հայկական խնդիրը յուշուած է, պուլկար Մակեդոնացիները միթիւններով և ուրիշ միջոցներով ջանացած են իրենց խնդիրն ալ մերին հետ խառնելու: Մենք ինչո՞ւ նոյնը չընենք, երբ անդին մէկ երկու պետութիւններ մեր խնդիրն ալ միատեղ լուծելու տրամադրութիւն ցոյց կուտան:

ԳՈՒՐՄԷԹ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 27 Յունիս

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆԴԷՍ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

Լոնտոնի Հայոց Միացեալ Ընկերութիւնը կրկին պատրաստած է Ս. Մանգեան հանդէս մը, որ տեղի պիտի ունենար Սոհրոյէի Հալի նշանաւոր սրահին մէջ, Յունիս 24 շաբաթ երեկոյ:

Հանդէսին պիտի նախագահէր Արմենիայի հեղինակ Պ. Հ. Ֆ. Լինչը: Վերջապէս հասաւ այնքան անձկանք սպասուած օրը, ու պահ մը մենք առօրեայ մեքենական կեանքը, ապրելու կռիւը յառաջ մղելու յաւիտենական անել խորհրդածութիւնները մոռցած՝ ժամ առաջ աճապարած էինք հանդէսին վայրը, մեր տարիներով օտարութեան մէջ նիստը սրտերը մի քիչ, անգամ մը եւս, հայկական ոգիով նորոգելու, մասնակցելով այդ «զուտ հայկական ??» երեկոյթին, ինչպէս կը խոստացուէր հրաւիրագրին մէջ:

Սրահին դուռները բացուեցան ժամը 7ին, ու մի քիչ սփոփանք կազմակերպիչներուն՝ փափաքուած խուռն բազմութիւնը սկսած էր տակաւ առ տակաւ գոյանալ, երկու ցեղէն գրեթէ հաւասար թիւերով, — հայ ու անգլիացի:

Հանդէսը բացուեցաւ ժամը 7ուկէսին ընդ նախագահ Տր. Տինճեանի միջանի խօսքով, ու բեմ հրաւիրուեցաւ Պ. Լինչ իր ատենախօսութիւնը սկսելու: Ներկաներուն խանդավառ ծափահարութիւններէն խրախուսուած, ու կարծես զոհ իր արտագրած գործէն ու նոյն ժամանակ վարձատրուած իր հայ ազգին մատուցած այնքան մեծ

ծառայութենէն, Լինչ զուլիս տուաւ զինք մեծարողներուն ու սկսաւ իր յուզիչ, թրթռուն ու միթիւրիչ բանախօսութիւնը:

Պ. Լինչ իր ատենախօսութիւնը սկսաւ հայոց պատմութենէն. նախ յիշեց Արամը ու իր քաջագործութիւնները. խօսեցաւ Արայի ու Շամիրամի վրայ, նկարագրեց հայոց թագաւորին անմահ գեղեցկութիւնը, վահանաձուլութիւնը ու հայրենասիրութիւնը. ու ապա պարծանքով յիշատակեց Շամիրամի Արայէն մերժում գտնելն ու պատերազմի հետեւանքը. այդ օտար հայասէրը որքա՞ն համակրութեամբ կը նկարագրէր այդ պատերազմը որուն մէջ հայք ամենայն անձնութեամբ կը պատերազմէին, ու մանաւանդ հայոց թագաւորը՝ որուն նոյնիսկ հոգը չէր թէ մահ կսպանար իրեն: Ու շարունակեց ըսելով. «Եւր է այսօր այս հսկայ պետութիւնը որ ժամանակ մը աշխարհի տիրելու բախտը ունեցաւ, եւր է Բաբելոնի պարծանքը, եւր է պէտք է փնտնենք նիւտէի թագաւորներուն մնացորդները ու գտնէ առանց փառքի փոքրիկ նշխարները, եւր է այն հոռու մէակաւ անեղ կայսրութիւնը՝ որ թէպէտ յաղթական, սակայն պատմական սքանչելի դաս մըն ալ հայէն ստացաւ... Ու ահա այս բոլոր հսկայ ազգերուն նոյնիսկ հետքը չէ մնացած. անոնք իրենց դերը միայն անցեալի մէջ ունեցած են ու այսօր միայն իրենց յիշատակը թողած, իսպառ այնպիսիաբար ու դատապարտուած են. իսկ անոնց չափ ու աւելի հին ու պատմական հայր, ան կապրի այսօր, ան պահած է իր կրօնքն ու ազգութիւնը, անձնական տառապանքներէ, այնքան անեղ ու սարսափելի արեւնհեղութիւններէ վերջ, զորս կարող եմ ըսել հայուն նման եւ ոչ մէկ ազգ ունեցած է: Եւ այս ապացոյց մըն է որ հայը կորսուելու, անյայտանալու դատապարտուած ազգ մը չէ, ու ինչ որ ալ ըլլան պարագաները, հայը պիտի պահէ իրեն կրօնքն ու ազգութիւնը, մինչեւ որ կրկին հասնի իրեն համար փայլուն ու զուարթ առաւօտը...» Յետոյ Պ. Լինչ ծանրացաւ աշխարհագրական դիրքին վրայ, որով ջանացած էր նոյնիսկ իր գրկին մէջ Հայաստանը նկարագրել: Իր գիրքը կարգացողներուն զինք լսողները պիտի դիւրաւ եղբակացնէին թէ ինչ որ կըսէր անկեղծօրէն արդէն զայնս իր գրքին էջերուն զրոյցած էր: «Հայաստան մը կայ ու կը մնայ» կըսէր. «ու սուտ է երբ շատեր կըսեն թէ Հայաստան մը չկայ, բայց ես այդ գաղափարը հերքած եմ կրկին, ու վստահ եմ թէ արդէն ամէն ոք ճշմարտութեան տեղեկացած է»:

Հատուր Ըլլալու ևն . . . Իս միայն «Ընհա Նինհա»

գանձերու: Ո՞վ է Բարսեղ - Մելիք Գրիգորեանց: (Ղարամիշիք) Ան է Դաշնակցութեան հիմնադիր եւ զեկամարը անհաշիւ հարիւրաւոր ոտկիներ գրպանող մէկը եւ որ այսօր դեռ կը շարունակէ իր ցոփ կեանքը, ոչ մէկ կօմիտէ եւ պիտի կրնայ յանդգնիլ հաշիւ ու զեկու անկէ: Յեղափոխութիւնը շահագործող իր անբարոյական վարքով մէկը որ անարժանաբար մօտէն ծանօթ է իր իման հայրիկի: Ղարամիշիք քանիցս փորձեց էջմիածին երթալ եւ ամէն ատեն կաթողիկոսական դռները գոցուած գտաւ իւր առջեւ, ատոր վրայ իբր վատ սիրտ մէկը Ռուսաստանի մէջ Դրօշակեաններուն համագել կը ջանար թէ իր իման մատնիչ մըն է, իբր թէ իր իման Հայրիկ Ղարամիշիքն իւր ընկերներով Վանայ մէջ մատնած է եղբոր: (այս դէպք Դաշնակցութեան զոյու թնեհն առաջ եղած է եղբոր) Պ. Դրօշակեաններ կուգէ՞ք ձեր այդ զեկամարին ի՞նչ մարդ ըլլալը գիտնալ, երկուողով մը հայրիկէն խնդրեցէք ու իմացէք, ի՞նչ գիտցածներս չպատմեմ, ահա ձեզի վստահելի անձ մը: Թող ան պատմէ: Կոտորածներու ատեն երբ կարենցին իր սիրելեաց կորուստը կողբար, այս անհոգի Ղարամիշիքը 800 ոսկի գրպանած՝ կոտորածին օրը հեռացաւ: Կարիւնէն, զբամը Դաշնակցութեան չէր պատկաներ, երբ Ա. եպիսկ. Ե. . . եան պահանջեց այդ դրամը, բոլորովին ուրացաւ իր քով 800 ոսկի յանձնուած ըլլալը օգտուելով եպիսկ. ի աքսորանքէն: Այժմ Ե. . . եան եպիսկ. Ե. . . է, թող հարցուի, ինք կը պատմէ Ղարամիշիքի ով ըլլալը: Եթէ Ղարամիշիքին ազգադաւ արարքները ամբողջապէս թուեմ խոշոր գիրք մը չի՞նել պիտի հարկադրուիմ:

Եկեղեցւոյ ԳՈՒՐԳԷՆ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսմանիոյ Բոման քաղաքէն կը գրեն թէ տեղւոյն մատուռին շինութիւնը աւարտեց է շնորհիւ հանգուցեալ ալրի Ուննա Սիմեոնէս-քուի ժառանգորդին: Մատուռը փոքրիկ եկեղեցի մըն է, որ գերեզմանատան կեդրոնը շինուած է 50 հազար ֆրանքի չափ ծախքով: Օծման արարողութիւնը ձմեռն պատճառաւ յետաձգուած է մինչեւ առաջիկայ մարտ:

— Ռուսմանիայէն Պոլսահայ թերթի մը ուղղուած թղթակցութեան մը մէջ, Ռուսմանիոյ հայ տարրին կրթական և հոգեւոր անխնամ վիճակը շատ տխուր գոյններով կը նկարագրեն: Ռուսմանիոյ վիճակը տարրներէ ի վեր հովուի երես տեսած չունի: Իւթիւնեան Եպիսկոպոսի մատնութեան մը առթիւ Ռուսմանիայէն գուրս ելնելէն ի վեր, ոչ էջմիածինը և ոչ ալ Պատրիարքարանը Ռուսմանիոյ Հայերուն հոգեւոր վիճակին նկատմամբ բան մը չկրցին ընել, միշտ հոն գտնուած եկեղեցիներու և վարժարաններուն հոգաբարձութիւնները իրենց ուղածին պէս կը ծախսեն, կուտան և կ'առնեն: Ոչ հարցնող կայ և ոչ փնտռող Պատրիարքարանը առաջնորդի մը կամ հոգեւոր հովուի մը ընտրութեան ձեռնարկելէ առաջ, պէտք է պաշտօնապէս բանակցութեան մտնէ գլխաւոր քաղաքներու հոգաբարձութեանց, նամանաւնդ քահանաներուն հետ, որոնք շատ քիչ բացառութեամբ կարծուածն են շատ աւելի մեծ գեր ունեցան Ռուսմանիոյ առաջնորդական և հոգեւոր հովուի ծանօթ խնդրոյն մէջ: Եւ տոնց ի վեր կրկնուած գանգատ

մըն է այս, որուն դարման մը չեղաւ տակաւին դժբաղդաբար:

— Բարիզէն հանգուցեալ Տիկին Մաննիկ Տափուտեանի եղբայրը Պատրիարքարանի նամակ մը գրելով, կը ծանուցանէ թէ կը յօժարի իր քրոջը կտակին համեմատ, Արմաշի Դպրեվանքին 250 ոսկի նուիրել: Դպրեվանքին խնամակալութիւնը այս նուէրով մտադիր է վանքին սեպակական աղօրքին շոգեշարժ մեքենայ մը գնել: Իսկ Դպրեվանքին մէջ գտնուած որբերը արդէն գործնական ուսումներ ալ առած ըլլալով, այս տարի շրջանաւարտ պիտի ըլլան ու յետոյ պիտի մեկնին իրենց ծննդավայրը, ուսուցչութեամբ զբաղելու համար:

— Դեկտեմբեր 31ին Թիֆլիսի մէջ պատահած հրդեհ մը Ներսէսեան դպրանոցին պատկանող ընդարձակ շէնք մը ոչնչացուցած է: Դպրանոցն, այսպէսով 32,000 ռուպլիի փաս մը կը կրէ:

— Քոնսթանցայի մեր թղթականիցը տեղւոյն հայոց Բարեգործական ընկերութեան մասին ուրախառիթ տեղեկութիւններ կը հաղորդէ մեզ: Ընկերութիւնը լրացող տարեշրջանին մէջ մօտաւորապէս 6,000 ֆրանք մուտք ունեցած է: Այս գումարին մեծագոյն մասը այլ և այլ ներկայացումներէ գոյացեր է շնորհիւ գործադիր անդամոց ջանքերուն:

Երիտասարդ խմբակէ մը հաստատուած այս ընկերութիւնը միջոց մը եղած է տեղւոյն ամէն դասակարգի ազգայինները իրարու մօտեցնող: Վերջացող տարւոյն հասոյթին կարեւոր մասը յատկացուցած է Արաքս սրահը զարդարելու, աթոռներ, հայելի, դաշնակ և այլ հարկաւոր ու ճարտարական զարմանքներ:

չակաւոր գոյքերով և բեմով մը, որոնց շնորհիւ այսօր այդ փառաւոր սրահը թէ՛ հայոց և թէ՛ ռուսներու թատերասրահ ու ժողովատեղի եղած է: և բաւական հասոյթ կը բերէ:

Նամակագիրը գիտել կուտայ վարչութեան թէ՛ նիւթական կողմէն զատ բարոյական կողմին ալ հոգ տանիլ հարկ է, քանի որ ընկերութիւնը ծնունդ առած է հայ երիտասարդութեան մտաւոր և բարոյական զարգացման սատարելու նպատակով: Կառավարկէ սարքել կիրակնօրեայ լսարաններ, հանգէսներ, հրգիւր ու դասախօսութիւններ:

Ընկերութեան Ընդհ. Ժողովը իր յառաջիկայ նիստին մէջ վարչութեան նոր անդամներ պիտի ընտրէ:

— Խանքենդի մէջ, Դեկտեմբեր 29ին ողբացեալ իսահակ Ժամհարեանի յիշատակին հոգեհանգիստ կատարուած է, երկու սեռէ ընտրեալ բազմութեան մը ներկայութեամբ:

Ժամհարեանները, իրենց բարեգործական նպատակներուն մէջ՝ զոր ազգային ամէն կարգի հիմնարկութեանց հասցնելու կը փութաւ: Ինչ, բաժին հանած էին նաեւ տեղւոյն եկեղեցիին կառուցմանը: Նոյնպէս եկեղեցւոյ դպրոցին, իր գոյութեան օրէն մինչեւ վերջը, Ժամհարեանները ամէն տարի նըպաստներ կը օհհանեն եղբոր:

— «Վէստի» հայ դերասանական խումբը՝ որ 3 1/2 ամիսէ ի վեր Քոնսթանցայի գտնուէր, երէկ քաղաքս հասաւ: Հոս երկու ներկայացում տալով Ռուսչուք պիտի մեկնի, թէեւ մտադիր էր Սիլիստրէ հանդիպել, սակայն Դաշնութիւնը սառած լինելուն պատճառով

խօսքը կրցի իմանալ:

Վանական դէպի ձայնը յառաջացաւ ու մտիկ ըրաւ: Զայնեքը հետզհետէ կը մօտենային: Յայտնի բան էր որ ապագամեծերու մէջ հասած էին որոնք բարձր ու վիթխարի էին:

— Ասոնք մեզի հետեւած են, Մհեր, ըսաւ Վանական: Կերեւի որ գետին վրայ եղած փոքրիկ գեղէն եկած են:

Աստիճանին հրացանի մը պայթիւնը լուսեցաւ, որուն յաջորդեցին ուրիշ պայթիւններ իրարու հետեւէ:

— Տղերք, հրամայեց Վանական, ուշադիր եղէ՛ք . . . օղին մէջ պարպուած հրացանին մը՝ պատմականէք . . . նայեցէ՛ք որ սուղ արժեք տաք ձեր գնդակները . . . :

Քառորդէ մը աւելի հրացաններու պայթիւնները շարունակուեցան եւ երթալով աւելի մօտ կէտերու վրայ պարպուեցան:

— Տղերք, ժամանակն է, գոչեց Վանական:

Քաղաքի զինակիրները, որ հա՛փ որ կրցան նշմարել մարդկային ստուերներուն գողգողալը, պարպեցին իրենց հրացանը:

Ան ատեն ջուրտերու հրացաններն աւելի բազմապատկուեցան ու անոնքի վճռութեամբ մը լեցուցին ապագամեծերու մէջ:

Կոխը տեսնող շարունակ երկու ժամ:

Լուսադէմին, Վանականի խումբէն՝ մէկ հոգի, իսկ քուրտներն տանիկու անձ ինկած էին:

Քուրտներու սատակները մնացին երեսի վրայ:

Վանական թաղել տալէն հոգը իր սիրելի ընկերը, սրտանց աղօթք մը մղմիցեւ ու քար մը սնկեց անոր վրայ:

Ու Զլի-Զափէն ուղղակի «Արտուր» սարին կողմը վերադարձաւ:

ԿՈՒՍԱԿՑԱՆԱՆ ԲԱՃԱՆՈՒՄԸ

Մեր պատմութեան մէջ, եթէ տխուր ու ցաւալի պարագայ մը կայ յիշատակելու, ասիկա կուտակցական բաժանումն էր, որ խուլ պայքարի համընթացութեամբ շարունակ կը յառաջանար, իր ետին թողնելով ա՛յն աւելը զոր ժողովուրդը չէր տեսներ ու չէր զգար:

Կուսակցական բաժանումը ծնունդ առած էր քանի մը անձանցով ու ազատականի հովիւր անող երիտասարդներու ընթացքէն: Եւ նախ՝ մտած էր խամրաներու դատակարարին մէջ, յետոյ՝ տարածուած էր մուր խաւերը:

Երկու անուն ունէր այդ բաժանումը.

Մին՝

Պահպանողական.

Իսկ միւսը՝

Յառաջդիմական:

Պահպանողական էին անոնք՝ որ խորհրդաւոր լուսթեան մը մէջ կը գործէին, ներքին ուժեր կը պատրաստէին ու կրկրին ամեն անկիւն, ամեն տեղ ու ամենուրեք գէնք փոխադրելու կը զբաղէին, շարունակ առարկելով որ՝ ժամանակը չէ . . . «Կարձակողական» դերքը մեր ուժերու սպառումն է եւ թէ սպասելու պէտք կայ:

Գալով յառաջդիմական կոչուածներուն, ահա՛ ինչ որ կը պոռային:

— Ի՞նչպէս համբերենք, ի՞նչպէս լռենք . . . դաւաճանութիւն չէ՞ այս . . . միթէ՞ տարիներով պիտի քնանանք, տարիներով մեր ձեռքերը կապուած պիտի թողունք ու տարիներով այս լուծը պիտի ճնշէ՞ վղկնուու վրայ . . . Բաւական է: Պահպանողական դերքը պէ՛տք է բաց թողունք: Կոխ, կոխ՝ կուգենք . . . արեւն կուգինք մինք:

Ու այս երկու հակադէմ տարրերը սկսած էին կազմակերպուիլ ու թանձրանալ ժողովուրդին մէջ:

Փուռ անդ ներսէս Արծրունին ու Վանական ամեն ջանք ու ամեն աշխատութիւն չնայեցին այդ երկու տարրերը միացնելու: Անոնք անդրդուելի մնացին:

Ա՛խ, զարհուրեցին՝ կար . . . :

Որպէս զի ժողովրդեան համարումը շահիւր յաջողութիւնը չկորսնցնէին, թէ՛ պահպանողականներն և թէ՛ յառաջդիմականները խոչնդոտ կը յարուցանէին իրարու դէմ:

Քաղաքին մէջ խամբա կոչուած դասակարգ մը կար: Այդ դասակարգը որ տարիներէ ի վեր վախճառութեամբ ու զեղացիներու ձախտի քրտնջրով ապրած էր ու կապէր, զաղտնապէս իր քիթը մտցուցած էր երկու տարրերու մէջ ալ՝ մէկը միւսին դէմ հանելու համար, քանդելու ջանալով ա՛յն ուժեղ կազմակերպութիւնն որմէ կը վախնար, որմէ կը դուրս գար:

(Շարունակելի)

աւաւ ստիպուած է միայն փետրի 15ին հոն երթալ :

Այս առթիւ խումբը կը խնդրէ մեզմէ հրապարակաւ իր շնորհակալութիւնը յայտնել քոնսթանդուլի հայ հասարակութեան՝ որ խումբն բազմութեամբ պատուած է իր ներկայացումները , և բարեգործական ընկերութեան վարչական մարմնոյն՝ որ ամէն միջոց ի գործ դրեր է խումբին յաջողութիւնը ապահովելու համար :

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ

ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Մօնաստորը վիւայէթի տախիւինտէ Օհրիտայա եագըն պիր պէօրիւք պուկար չէթէսի վէ թիւրք ասքէրլէրի պէյնիւնտէ մուսատէմէ վուզու պուլուպ , չէթէնին տաղըմըզ օլտըզը Սթանպուլտան պաթէյէկրաֆ պիւտիւրիլիօր :

— Մաքէթոնիա պուկար գօմիթէսինէ մէթիւնպ կէօթիւրէն պիր չախս Մօնաստորը վիւայէթիւնտէ թուրքուլու : Էլէ կէչէն մէթիւնպար սէպէպի իլէ պուշգալար տախի տէրտէսթ օլընմըշլար :

— Բոււ բաթրիգի Մաքէթոնիա տա պուլընտէ տէսթթարա իրթարնամէլէր հօլլայուպ , չուհալը հազըրտա՝ էհալի պէյնիւնտէ իրթիւրաֆ հապըլ իւտիճի հարէթէթլէրտէն սազընմալարընը թէնպիհ իթմիշ տիր :

— Սթանպուլտան պիր թէլէկրաֆ Սօֆիատաքի իրիւք գօմիթէրինին կէրի չազըրըմաւ պապընտա վուհուրա կէլմիշ օլան շայէայը թէքըիպ իտէյօր : Գօմիթէրին Սթանպուլ կիթմէսի Պուկարիւնըն աշվալընտան վէ Մաքէթոնիա գօմիթէսինին հարէքեաթընտան տօլայը բարթթընը թագաթիմ իթմէք իչիւն օլուպ , պիր գաշ կիւնտէն Սօֆիայա ալտէթ իտէճէք տէյօր :

ՏԱԽԻԼԻԹԷ

Պուկարիւնըն պօրճարընը պիրլէշտիրմէք վէ ֆաիլի 100տէ ճտան 5է ինտիրմէք մագսէտի իլէ հիւքիւմէթ եէնի թէչէպպիւսաթա պաշլամըշ տըր : Մալիէ նազըրընըն ախիւրէն Բարիլէ կիթմէսի պու մագսէտէ հաժ օլընըյօր : Ֆաթաթ սօն տէֆա ալընան իսթիգրազ մուգալէլէսի իլէ Պուկարիւնըն եէնիտէն իսթիգրազ իթմէսի էօտիւնճ վէրմիշ օլան պանգալարըն բէյիլէ մուհափվէլ օլուպ , շիմտի էն էվէլ մէզըիւր պանգալարտան իզին ալմագ իգթիգա իտիճէք , վէ պուլընտէ իչիւն տէ Պուկարիւնըն աշվալը մալիյէսինին էմիլիէթէ շայան պիր հալա կիրմէսի լազըմ տըր :

Պու պապտէ միւլէքէրէլէր եա :

զընտա պաշլալաճագ ըմբշ իտէտէ մէսէլէնին հալի շիմտիքի Սօպարանիլէն իհալէ օլընալաճագ կէօրիւնիօր : զիրա 5—6 հաֆթատան գարունաճագ տըր :

— Բուս գօնսօլօսը Մ. Պահմէթիլիւն Բէթրապուրկտան կէրի չազըրըմըզ օլմասը միւրէվի տիր : Մէրգոււ Սօֆիատան կիթտիկի էսնանէ՝ առէթ իւզընէ՝ Բրէնս թաւաֆընտան ստաթիօնտա քիմսէ պուլընմամըշ տըր :

— Սօֆիատան պուկարլարա տօսթ օլմայան պիր կազէթա մուսպիրի չէօլլէ եազըյօր :

Թիւրքիւնըն Պուկարիւնըն գարըն իլանը հարալ իտէճէկիւնէ վէ պու մագսէտէ հազըրընտա պուլընտըղընա տայիր շայէալար վար տըր : Թիւրքիա՝ սէօլլէթլէրին իսլաւաթ թէքլիթիւնի գապուլ իթմէտիկիւնտէ , պուլար անըն իւզըրիլէն ճէպը իսթիմալ իթմէլուպ , եալընըզ Պուկարիւնըն վէ Սերպիայա սէրպէսթիլէթ վէրէճէքլէր իսթէտիքլէրի կիպի հարէքէթ իթմէլէն : Ֆաթաթ պուլարըն Թիւրքիա իլէ մուհարէպէ իթմէլէրինտէ մաղուպ օլալար արագի դայալ իթմէլէրինի տէօլլէթլէր թէմին իտէճէքլէր իմիշ : Պու իշ սօն Եուլանս-Թիւրք մուհարէպէսինին իթմէսինին անալընըյօր :

Ֆաթաթ Սօֆիատաքի հիւքիւմէթ տաիլէլէրինտէ Թիւրքիա իլէ մուհարէպէ ալընաճաղընա բէք ինանմայօրլար , վէ պու շայեսթ Մաքէթոնիա գօմիթէլէրինտէն չըքմըշ տիր զանն իտէրիմ : Քէզա Պուկարիւնտա հազըրըն կէօրիւնէյօր , եալընըզ իքիթապուր ասքէր էտիրնէ սինօրընա կէօնտէրիլի տիր , պու տէ իլէրուտէ թիւրքլէրին Եարգ Բուլմէլիէ հիւքիւմէթա գարըն սինօրը գալիլէշտիրմէք իչիւն տիր :

— Սօպրանիտէնազըր Մ. Լուգքանուլըն ալէհինէ շէտիտ միւհաւտէլէլը վուզու պուլուտ : Պու գալթըն Սթանպուլը գաթիլ իթմէքտէ բարմալը օլտըղընա տայիր մէպուս թէօտօրըզ հիւքիւմէթի իսթիլմալ իթտի : նազըր ճէպապէն մէսէլէնին շիմտի մահքէմէտէ պուլընտըղընը պէյան էյլէտի :

— Մ. Սարաֆուլա թարաֆտար օլան գօմիթէնին Մաքէթոնիայա սիւհալ վէ էրգազ կէօնտէրմէքտէ օլտըղը վէ Միսայիլուփիլիին Մաքէթոնիա իչիւն պուկար միլլի պանգասընտան 150,000 ֆրանք իսթիգրազ իթմէլէ չալըշտըղը Սօֆիատան էնէպի կազէթալարա պիւտիւրիլի տիր :

— Ֆրանսիւզ հիւքիւմէթիւնտէն մէպուլարա թէվզի օլընանան «Սարը Բէսալէնին» նէշրինէ պէքլէմէքտէ օլան Մաքէթոնիա գօմիթէլէրի , շիմտի մէզքիւր Բէսալէնէշր օլընմըզ օլմալլէ , նէ եօլթուլթաճալարընը պու կիւնիլէրտէ կէօթլէրէնէքլէր :

Բ Ո Ւ Ս Ի Ա

Բէթրապուրկտաքի ֆրա սըզ էլէշիսի Մ. տը Մօնթէպէլլօ կէրի չազըրըմըզ օլուպ , թէքըի մէմուլիլէթ իթմէսինէ տայիր Բարիս :

տէն գապուլ իթտիկի էվրագըրէսմիլէսինի Չարա թագաթիմ իթմիշ վէ տիւն Բէթրապուրկտան մուֆարէթէթ էյլէմիշ տիր :

— Թոււնա նէհրի իւզէրինտէ վարօր իչլէտէն բուս շիքէթի լալլ օլուպ , տիկէր պիր եէնի շիքէթ թէշիլ օլընըյօր : Մ. թիւրթ պու եէնի շիքէթէ տիրէքթօր նասպ օլընմըշ տըր :

Ֆ Բ Ա Ն Ս Ա

Տամատ Մահմուտ բաշանըն ճէնազէսի Բարիլտէ տէֆն օլընըր իքէն թիւրքէն նուլթ իրատ իտիլմէսինի բօլիս մէնն իթմիշ տիր , Եալընըզ Ահմէտ Բիլա Ֆրանսըզճա իրատը նուլթ իթտի :

Իշպու մէմանէաթտան տօլայը , մէճիւսի մէպուլուտա Մ. Տընի Գօլէն հիւքիւմէթի իսթիլմալ իթտի վէ վիւքէլա բէյիսի Մ. Գօմպ ճէվապէն , «Տամատ Մահմուտ բաշանըն տէֆնի էսնասընտա ալիւնը բուհանի սէրպէսթ պըրագըլմըշ տըր , եալընըզ թէօն թիւրքլէր թարաֆընտան էնէպի հիւքիւմէթա գարըն հազարէթ օլընալընը հիւքիւմէթ մէնն իթմիշ տիր» տէտի :

Մ Ը Ս Ը Ր

Լօրտ Գրօմէր Գահիրէտէ իւկի իւզ գօնսօլօսը օլմագլ պէրապէր Մըսրը հիւքիւմէթիւնին իտիլմէն տահա թէրաթիլի քահպէրի օլուպ , ախիւրէն իտարթուտա իրատ իթտի պիր նուլթա տէմիշ տիր : «Դուաքէմէ գօտար չըմէնտըֆէր ինչասը մէմալիլին թէրագրսընը թէմին իտէճէք , վէ պէն Գահիրէյէ ալտէթիմտէ պիւա թէէլիլ ինչաթըն պաշլանմասընա չալընաճաղըն» :

Մըսրըն իւկիլիլ հիւմայէսի ալթընա կիրմէսինտէն պէրու , նիւֆուգճա վէ թիւրթէթէ գաթ պէգաթ թէրագըրը , արազինին արթմասը , էմիլիլիլ ու ասայիլին թէմին կէօզ էօնիւնէ ալաճագ օլուր իտէք , ինկիլիլէր Մըսրըն էհալիսինէ հագիթի պիր սաատէթ կէթիլմիշ օլտըզլարընը իթիւրաֆ իթմէմէք միւլթին օլմագ , Ալըն սաատէթի թիւրքիւնըն տիկէր գըթալարընա տալի թէմէնի իթմէք հէր պիր վաթանբէրվէր օսմանը իչիւն վազիթէ տիր :

Մ Ի Ի Թ Ե Ն Ե Վ Վ Ի Թ Է

Հօլանտատա չըմէնտըֆէր մաքիւսիլ վէ տիկէր մէմուլարըն պիր գաշ ալընթը թաթիլի մէշլուլիլէթ իթմիշ օլտըղընտան , Թըրէնլէր իչլէմէմէքտէ տիր :

— Սպանիանըն Պէսէլօն շէհրիւնի իչլէրինի թաթիլ իթմիշ օլան իչիւրէր մուհասէրէ ալթընա ալուպ , քէօլլէրտէն վէ սայիր շէհրիլէրտէն կէլէն նաֆագալա տայիր մալլէրի գապթ իտէյօրլար : շէհրտէ էրզան պիլմէքտէ օլուպ

էկէր պու հալ տէվամ իտէճէք օլուր իտէ եագըն կիւնտէ գըթըրգ հիւքիւմէթ տիր : Ալլըգըն վէ խըզմէթքեար օլան քէօլլիլէր տալի իչիւրէր իլէ պիւրէշմիլլէր :

— Մատրիտտէ Մարթին իսմինտէ պիր անարշիթ տէրտէսթ օլընտը , պու իսթիլթագընտա՝ Պէլհիա գրալընը գաթիլ իթմէք վազիթէսի իլէ միւքէլլէթ պուլընտըղընը սէօլլէմիշ տիր :

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

Թիւրքիւնի Ա. հատորը զրկած ենք մեր հետեւեալ գործակալներուն . ուստի այդ խիստ հետաքրքրաշարժ ու շահեկան գիրքը ստանալ փափաքողները կրնան գիմել :

Պուրկազ	Տ. Արտաշէս Հարենցի
Ֆիլիպի	» Գ. Թիւթիւնճեանի
Շուրա	» Ասլան Տօնիկեանի
Ռուսլոֆ	» Սարգիս Մանուկեանի
Սօֆիա	» Ասատուր Մկրտիչեանի
Տօպրիշ	» Նիկողոս Սիւպեանի
Սիլիւստի	» Յ. Սարգսեանի
Սիլիւստի	» Տէր Վաղինակ Հօր
Պուրիշ	» Յովհ. Փափաղեանի
Քօնսթանդուլ	» Սիւսիկ Մէլիքեանի
Կաշաք	» Տէր Ղեւոնդ Հօր
Գալիսի	» Կ. Էրզնկաթեանի
Աղէսաւնի	» Ս. Մարգարեանի
Պուրն	» Ձ. Հայրենեացի խմբ.
Ֆիլիպի	» Կ. Մարութեանի
Ռուս	» Յակոբ Ֆրանքեանի
176 Սաւուր Պրիճ	

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԿԱՄ ՄՐՄՈՒՅ ՀԱՅԿԱԿԱՆ : Այս երգարանը Բ. նշգամ տպագրուելով աւելի ճոխագած ու բարեփոխուած է , եւ հակառակ դէպքին առանձնապէս կը պարտաւորէ սեզգային հին ու նոր խիստ շատ հրագիր : Գին 1 Ֆր.

ՆԷՏԱ ԿԱՄ ՄԱՄԻՍ ՊԱՍՏԱՆԸ , Պուկարիւնըն ազատութիւնէն առաջ Պուկար գիւղացիին թիւրքիլէր կըրած տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ : Շատ հետաքրքրական : Գին 50 ՍԱՆԻ :

ՀԱՅԿԱՆԻՔԻ ԶՈՂՆԵՐ , Պատկերմը Տաճկահայաստանի իրական կեանքին , գրեց Ղ. Նահապետեան : Զեղչեալ Գին 1 Ֆր. :

Այս գիրքերը տառապալի համար պէտք է գիմել իրաւունքի խմբաբուլթեան , բօսթի ճախը 10 ալիս սանթիմ միտտեղ զրկելով . իսկ գիրքերու արժէքին համար , կթէ ուրիշ գիւրթիւններ պակսին , կ'նշուանուի նամակագրօյմ 10 0/0 զեղչով :

ԶՐԻ ԾՄԵՆՈՒՑՈՒՄ ԶԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՐ

Պաշտօնական ազդերու տղը (25 ան) 10 անգիլիւ : Անհատական ազդերու տղը (25 ան) 20 անգիլիւ : Երեք անգամեւ աւելիի համար 20 0/0 զեղչ : Փոխարեանը դրամ կամ անհատական դրամ զրկել կանխիկ :

Одговорникъ Н. Драгулевъ
Печ. на Хр. Н. Войняковъ—Варна